

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Դիավանտ ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-2025/16-14-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	<p>1 34151200/506 Սիմուլյացիոն համակարգի փոխարինում և համալրում Համալսարանի սիմուլիացիոն կենտրոնում շահագործվող LapSim սիմուլյացիոն համակարգի փոխարինում և համալրում: Կենտրոնում շահագործվում է LapSim ապրանքային նշանի սիմուլիացիոն համակարգ, որը ներառում է թվով 4 հետևյալ մոդուլները՝ 1. Հիստերեկտոմիա, 2. Խոլեցիստեկտոմիա, 3. Նեֆրեկտոմիա, 4. Վիդեո-թորակոսկոպիկ լոբեկտոմիա՝ բոլոր հինգ թոքաբլթերի վարժանքներով, Կենտրոնում առկա LapSim սիմուլյացիոն համակարգը պետք է փոխարինվի նույն մոդելի, ամբողջությամբ նոր և վերջին սերնդի սիմուլյացիոն համակարգով, որը կպարունակի բոլոր՝ արդեն իսկ վերը նշված թվով 4 առկա ֆունկցիաները և մոդուլները: Պատվիրատուն վաճառողին է հանձնում կենտրոնում առկա և շահագործվող LapSim արտադրության սիմուլյացիոն համակարգը առկա ֆունկցիաներով և մոդուլներով և փոխարենը ընդունում է վաճառողից նույն մոդելի ամբողջությամբ նոր և վերջին սերնդի սիմուլյացիոն համակարգը, որը ներառում է վերջին թարմացման նույն ֆունկցիաները և մոդուլները: Բացի այդ, նոր սերնդի համակարգը նաև պետք է համալրվի ստորև նշված հավելյալ ուսումնական մոդուլներով, ինչպես նաև վիրտուալ իրականության VR համակարգով՝ լիարժեք ուսումնական վարժանքների իրականացման համար: 1. Գինեկոլոգիայի մոդուլ, 2. Ապենդեկտոմիա, 3. Բարիատրիկ վիրաբուժություն, 4. Աճուրդային ճողվածք: Նոր սիմուլյատորի ցուցանիշները. Սիմուլյատորը պետք է լինի ամբողջությամբ համակարգչայինացված և ինտերակտիվ: Սիմուլյատորը պետք է գործի համակարգչի վրա: Սիմուլյատորը պետք է ունենա CE հավաստագրում: Համակարգը պետք է ներառի՝ 1. Ոտքի պեդալ՝ Էլեկտրավիրաբուժական կոագուլյացիայի ակտիվացման համար, 2. Հապտիկ ինտերֆեյսային գործիքներ,</p>

ոչ պակաս, քան 2, 3. Պատենտավորված հետազոծման սարք, հիմնված բարձր ճշգրտության հետազոծման տեխնոլոգիայի վրա, 4. Էրգոնոմիկ գործիքների բռնակներ, ոչ պակաս, քան 2, 5. Տեսախցիկ: Սիմուլյատորը պետք է ներառի շարժման հայտնաբերում՝ 5 ազատության աստիճաններով՝ ներդրում (առաջ/ետ), թեքում (վերև/ներքև), պտույտ (ձախ/աջ), բռնակի պտտում և բացում/փակումը: Սիմուլյատորը պետք է ապահովի հապտիկ (ուժի) հետադարձ կապ՝ 3 ազատության աստիճաններով՝ ներդրում, թեքում և պտույտ: Սիմուլյատորի սայլակը պետք է տեղաշարժվի անիվների վրա՝ հեշտ շարժունակության համար: Սիմուլյատորը պետք է ունենա կողային համան վահանակ՝ վարժանքների կառավարումը հեշտացնելու համար: Սիմուլյատորը պետք է ունենա առնվազն 27” հիմնական սենսորային մոնիտոր: Սիմուլյատորի բարձրությունը պետք է լինի Էլեկտրական կարգավորվող: Սիմուլյատորը պետք է ապահովի լիարժեք ուսուցում լապարոսկոպիկ վիրաբուժության ոլորտում: Սիմուլյատորը պետք է հնարավորություն տա վիրաբույժին և ասիստենտին առանձին, բայց միաժամանակ կառավարել գործիքներն ու տեսախցիկը նույն Էկրանին: Տեսախցիկը պետք է թույլ տա կարգավորել՝ 1. Անկյունային օպտիկա, 2. Խոշորացում, 3. Լույսի ինտենսիվություն: Գրաֆիկական Էկրանը պետք է կարողանա փոխարկվել 2D և 3D ռեժիմների միջև: Պետք է տրամադրվեն փոխարինելի իսկական կարման բռնակներ՝ կարի ուսուցման իրականությանը մոտեցնելու համար: Նոր սիմուլիացիոն ծրագիր. Սիմուլյատորը պետք է թույլ տա կատարել հմտությունների հիմնարար վարժանքներ (հիմնական հմտություններ) առնվազն 17 տարբեր վարժության մեջ, ինչպիսիք են՝ 1. Տեսախցիկի նավիգացիա, 2. Գործիքի նավիգացիա, 3. Կորորդիկացիա, 4. Բռնում, 5. Կտրում 6. Կարում, 7. Կաթետերի ներդրում, 8. Կլիպերի կիրառություն, 9. Բարձրացում և բռնում, 10. Աղիքների կառավարում, 11. Նուրբ դիսեկցիա, 12. Կնքում և կտրում, 13. Ճշգրտություն և արագություն, 14. Պեգերի փոխանցում, 15. Շաբլոնով կտրում, 16. Կապող օղակ, 17. Մետաղալարով օղակ: Սիմուլյատորը պետք է ներառի տեսախցիկի կառավարման վարժանքներ՝ որովայնի և կոնքի անատոմիային ծանոթանալու համար: Փոխարինված և համալրված սիմուլյատորը արդյունքում պետք է ներառի ստորև մոդուլները և հնարավորություն տա վերապատրաստում անցնել հետևյալ վիրահատությունների համար՝ 1. Գինեկոլոգիայի մոդուլ, 2. Հիստերեկտոմիա, 3. Խոլեցիստեկտոմիա, 4. Ապենդեկտոմիա, 5. Նեֆրեկտոմիա, 6. Բարիատրիկ վիրաբուժություն, 7. Վիդեո-թորակոսկոպիկ լոբեկտոմիա՝ բոլոր հինգ թոքաբլթերի վարժանքներով, 8. Աճուկային ճողվածք: Վարժանքների փաթեթը պետք է ներառի հրահանգներ՝ ներառյալ տեսանյութեր: Բոլոր վարժանքները պետք է լինեն հասանելի VR ռեժիմում՝ առանց հավելյալ համակարգչի: VR ռեժիմը պետք է ներառի 360° վիրահատական սենյակի միջավայր՝ զգացողությունն առավել իրական դարձնելու համար: VR ուսուցման ռեժիմը պետք է հնարավորություն տա ընտրել տարբեր խանգարող գործոնների մակարդակներ՝ ինչպիսիք են աղմուկը և ֆոնային անձնակազմը: Ծրագրային ապահովում՝ ադմինիստրատիվ հարթակ: 1. Պետք է ներառի բոլոր վարժանքների կարգավորման

հնարավորություններ՝ դժվարության մակարդակներն ու մարտահրավերները հարմարեցնելու համար: 2. Պետք է տրամադրվի նախապես սահմանված դասընթացների գրադարան: 3. Պետք է լինի կատարողականության հետադարձ կապ՝ վարժանքի վերլուծության և դասընթացի կառավարման համար, ներառյալ ուսուցման կորերը, սխալները, բարելավման առաջարկները և յուրաքանչյուր նստաշրջանի տեսագրությունը: 4. Յուրաքանչյուր վարժանքի համար անցնելու/ձախողվելու սահմանաչափերը պետք է կարգավորվող լինեն և կարողանան ներմուծվել փորձագետի/ուսուցչի տվյալների հիման վրա: 5. Վերապատրաստվողների/խմբերի կատարողականության ընդլայնված վիճակագրությունը պետք է հասանելի լինի ադմինիստրատորին: 6. Ադմինիստրատորը պետք է կարողանա դասընթացները դասակարգել ըստ ուսուցչի: 7. Պետք է ներառվի պատրաստի հավաստագրի տպագրության գործառույթ՝ հնարավորություն տալով ներմուծել լոգո և ավտոմատ ներբեռնել ուսանողների անունները: 8. Ծրագրային ապահովման ինտերֆեյսը պետք է հասանելի լինի հետևյալ լեզուներով՝ անգլերեն, ռուսերեն: 9. Օգտատերը պետք է կարողանա ստանալ ուղիղ տեխնիկական աջակցություն Էկրանի համօգտագործման միջոցով: Երաշխիք ամբողջ համակարգի համար՝ ոչ պակաս, քան 1 տարի, ամբողջական համակարգի տեղադրման, կարգաբերման և փորձարկման օրվանից հաշված: Համակարգի տեղադրումը, կարգաբերումը, փորձարկումը պետք է իրականացվի վաճառողի միջոցներով և արտադրողի կողմից սերտիֆիկացված մասնագետի կողմից, սերտիֆիկատի առկայությունը պարտադիր է: Վաճառողը պետք է ապահովի սպասարկման հասանելիություն ամենօրյա ռեժիմով՝ տեղում, նաև անմիջապես արտադրողի կողմից հեռավար ռեժիմով: հատ 1

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Диавант в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЕЦДЦПДР-2025/16-14-БПРЗ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	